

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/10

23 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց «Քուեսթթեյդ ինտերնեյշնլ ինկ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի 31.03.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքի հաշվարկման դեմ:

«Քուեսթթեյդ ինտերնեյշնլ ինկ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի գանգատում բերված փաստարկները.

2013 թ-ի դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված հարկերի հաշվարկը «Քուեսթթեյդ ինտերնեյշնլ ինկ» ընկերության հայաստանյան մասնաճյուղը (այսուհետ նաև մասնաճյուղ) էլեկտրոնային եղանակով փորձել է ուղարկել 17.01.2014 թ-ից, սակայն անհասկանալի պատճառներով այդ հաշվարկները հնարավոր չէր լինում ուղարկել ծրագրային խափանումների պատճառով: Բանավոր կարգով մասնաճյուղը փորձել է ճշտել հաշվարկները էլեկտրոնային եղանակով ուղարկելու անհնարինության պատճառները, սակայն ապարդյուն: Այդ մասին 21.01.2014 թ-ին online-support@taxservisce.am էլեկտրոնային փոստին ուղարկվել է նամակ, որով հայտնվել է ստեղծված խափանման մասին և խնդրվել է այն ուղղել:

22.01.2014 թ-ին էլեկտրոնային նամակի միջոցով հայտնվել է, որ խնդիրը փոխանցվել է տեխնիկական մասնագետների ուսումնասիրությանը և լուծման ընթացքի մասին լրացուցիչ կտեղեկացվի: Մինչև 05.02.2014 թ-ը որևէ պատասխան չստանալով, կրկին էլեկտրոնային նամակով մասնաճյուղը խնդրել է տեղեկացնել խնդրի լուծման ընթացքի մասին: Ի պատասխան հայտնվել է, որ համակարգը թարմացվում է և առաջարկվում է հաշվարկները կրկին ուղարկել հաջորդ օրը: 10.02.2014 թ-ին նոր նամակով հայտնվել է, որ դեռևս խնդիրը լուծված չէ և հաշվարկները մասնաճյուղը չի կարողանում ուղարկել: Վերջին նամակը ուղարկվել է 20.02.2014 թ-ին՝ նախորդ նամակի բովանդակությամբ:

Հաշվարկը մասնաճյուղը հնարավորություն է ունեցել ուղարկել հարկային մարմին միայն 20.02.2014 թ-ին, երբ վերացվել են ծրագրային խափանումները: Այսինքն, 2013 թ-ի դեկտեմբեր ամսվա հարկերի վերաբերյալ հաշվարկը սահմանված ժամկետից ուշ է ներկայացվել ծրագրային խափանման պատճառով, ինչի մասին մասնաճյուղն անընդհատ և հետևողականորեն տեղեկացրել է հարկային մարմիններին: Խոչընդոտները վերանալուց հետո անմիջապես հաշվարկները ներկայացվել են: Հետևաբար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը մասնաճյուղի նկատմամբ կիրառելի չէ:

Նկատի ունենալով, որ նշված հոդվածով սահմանված տուգանքը ծրագրի կողմից մեխանիկորեն է հաշվարկվել, մասնաճյուղը խնդրում է կատարել վերահաշվարկ և հաշվարկված տուգանքը վերացնել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեցին գանգատին կից ներկայացված ապացույցները, որոնք մասնաճյուղի պնդմամբ հիմնավորում են հաշվետվությունների ներկայացման փորձը ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ծրագրային խնդիրների առկայության հետևանքով ձախողվելու հանգամանքը: Մասնավորապես, գանգատին կից ներկայացված են մասնաճյուղի անունից հանդես եկող Արթուր Լալազարյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների համակարգը սպասարկող մասնագետ Աշոտ Պետրոսյանի միջև ինտերնետային նամակագրության արտապատկերները: Կողմերի միջև նշված նամակագրական կապը տեղի է ունեցել մի քանի անգամ, համապատասխանաբար՝ 2014 թ-ի հունվարի 21-ին, 22-ին, փետրվարի 5-ին, 6-ին և 10-ին:

Գանգատին կից ներկայացված ինտերնետային նամակագրության արտապատկերների իսկությունը պարզելու նպատակով կապ է հաստատվել ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների համակարգը սպասարկող մասնագետ Աշոտ Պետրոսյանի հետ, որը հաստատել է վերոգրյալ արտապատկերներում զետեղված տվյալների իրական լինելը:

Հանձնաժողովի համոզմամբ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են մասնաճյուղի պնդումներն այն մասին, որ հաշվետվությունների ներկայացման փորձը ձախողվելու պատճառը հանդիսացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ծրագրային խնդիրների առկայությունը:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թ-ի դեկտեմբեր ամսվա հաշվետվությունները մասնաճյուղի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ծրագրային խնդիրների առկայության հետևանքով, այսինքն՝ տվյալ դեպքում բացակայում է մասնաճյուղի մեղքը հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացվելու հարցում, հետևապես Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:


Հարկ է նկատի ունենալ նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված, ի վնաս սուբյեկտի իրականացված վարչարարության դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գլխավոր պայման է հանդիսանում այն, որ խախտում կատարած անձը զանցանք կատարած լինի մեղավորությամբ: Այսինքն պարտադիր է, որ անձը խախտումն իրականացրած լինի մեղքի առկայության պարագայում, որը տվյալ դեպքում բացակայում է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«Քուեսթորեյդ ինտերնեյշնլ ինկ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի 31.03.2014 թ-ի գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ